

Յ. Գ. — Տեղական ոռու լրագիր «Նովոե Օբոզրէննէ»ի այսօրուայ համարում կայ մի թղթ-  
 թակցութիւն «Սեւ ծովի եզրքեր», մի ոռու անուան ստորագրութեամբ, որը շատ է համա-  
 պատասխանում մեր վերոյիշեալ տողերին: Կը բերենք այդ թղթակցութիւնը այստեղ թարգ-  
 մանաբար, նամանականց որ նա անշուշտ շատ հետաքրքիր պիտի լինի ամեն մի Հայու հա-  
 մար, որովհետեւ տեղեկութիւն է տալիս Տանկաստանից Կովկաս զաղթած Հայերի, եթէ ոչ  
 ամբողջութեան, գոնէ մի մասի նկատմամբ: Այդ թղթակցութիւնը ներշնչուած է զարմանքով  
 դէպ ի Հայու աշխատասիրութիւնը:

ՍԵՒ ԾՈՎԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵԶՐԻՔՈՎ

1893 թւից մինչև այժմ Կովկասի Սեւ ծովի եզրքում երեւում են բազմաթիւ փախըս-  
 տական Թրքահայեր, որոնք փախել են եւ զեռ եւ հիմա էլ փախելում են Թրքաց բարբարո-  
 սութիւնից: Այս մի քանի հազար մարդկանց փախուստը, ակնաստեաների վկայութեամբ,  
 ներկայ շառւ. էր յուզող պատկերների մարդկային տանջանքների, որի վրայ չէր կարելի նա-  
 յիլ առանց սարսափի ցատակցութեան, Ամբողջ խմբի — Երիտասարդների, ծերերի, երե-  
 խայոց, կանանց, — ուժաթափ եղած՝ հիւանդութիւններից եւ սովից, իբրանց մարդկային ա-  
 մենաբարձր զգացումների մէջ վիթաւորուած, շտպում էին այստեղ, այս նոցա համար անպայտ  
 երկիրները, կոտորածներից փախելու համար: Իրութիւնը յուսահատական էր. զրկուած լինե-  
 լով մի որ եւ իցէ կարքից, սոված ու անպատասպարան, նոքա ստիպուած էին ամենիլ ամէն տե-  
 սակ զրկանքների, մինչև որ նոցա օգնութեան հասան Կովկասի Հայերը, ինչպէս եւ Ռուսաց  
 դասակարգից ամենաբն. իր անկն աւորութիւնները: Այս օգնութիւնը, սկզբից ինարկէ միայն,  
 ազատեց շատերին ստորութիւններից եւ ի զուր տանջանքներից մի կտոր հաց գտնելու հա-  
 մար, իսկ յետոյ կարողութիւն տուեց սեփական աշխատանքով միջոց ձեռք բերել կեանքի  
 գոյութեան համար:

Այդ միջոցներից գլխաւորը պէտք է համարել ծխախոտի մշակումը, որով Հայերը պա-  
 րագլուծ էին, բնակելով Կովկասի Սեւ Ծովի եզրքում:

Այդ տեղի հողը, ինչպէս եւ յիշել են առաջ (տես՝ «Ն», Օրօգ, թիւ 5913) աւելի եւս նպաս-  
 տում էր գլխաւորապէս երկրաշրտեակման այդ ճիւղով պարագլուծու: Չնչին կապայի վճարով,  
 եւ շատ անգամ անլճար, տեղական հողագործները թոյլ են տուել Հայերին բնակել իրանց  
 մասերում, որպէս զի նոքա սրբեն այդ հողը ծառի ուտիչներից:

Առաջ Հայերը ստիպուած էին գործադրել բաւականին մեծ աշխատանք իրանց զրաւած հո-  
 դի վրայ, որովհետեւ նրանց յանձնած էին ամենամաճյի տեղերը, բայց եւ այդ իսկպէս եղիպ-  
 տական աշխատանքին մէջ, նրանց հանգստացնում էր այն միտքը, որ նոքա կարող են հաս-  
 դիստ լինել իրանց կայքի ու կեանքի համար, մինչդեռ նոքա ստիպուած կը լինէին իրանց  
 նախկին հայրենիքում գողալ:

— Այն դժբաղդութիւններից եւ վշտերից յետոյ, որ մենք տարաբ. Տանկաստանում,  
 կեանքը այստեղ մեզ պէտք է երեւալ իբրեւ արքայութիւն, — առում են հայ փախստականները:  
 Հայոց աշխատանքը ի դուր չի դարււ, առաջին տարին եղու: Այսպէս վատ եւ այդ հակադասութիւն:  
 Լաւ ծանօթ լինելով ծխախոտի մշակման հետ, նոքա սկսեցին մշակել նորա ամենալաւ  
 տեսակից, եւ այդպէսով նոքա զրաւում էին գնողներին, ի թիւս որոնց կային Պետերբուրգի եւ  
 Մոսկուայի ծխախոտի հաստատուն ֆիրմաներ:

Ծամանակի ընթացքում նոքա սկսեցին համարուել որպէս ամենալաւ ծխախոտ մշա-  
 կողներ Սեւ ծովի համարեա բոլոր Կովկասեան եզրքում: Նրթական միջոցները թոյլ չէին  
 տալիս նոցա պարապիլ ծխախոտի մշակման աւելի լայն ծաւալով, բայց եւ գործանից գոյացող  
 եւ ոչ այնքան մեծ շահը միջոց է տալիս ապրիլ նրանց, թէ՛ իրօք ոչ հարուստ, այլ կա ելի է  
 ասել համեստ կերպով: Բաց ի ծխախոտի մշակութիւնից, նոքա անձեցնում են եզրիպայացորեն եւ  
 ընտելարեղեններ, որոնց աւելորդ մասը ծախում են տեղական շուկաներում, մեծ ճարպիկու-  
 թեամբ բերելով այդ տեղերը գտւարանցանելի ճանապարհներով:

Տեղական բնակիչների, նմանապէս բոլոր հողատէրերի կարծիքով, ծխախոտով պարագող  
 Հայերը բաւականին հանպարտ մարդիկ են, աշխատասէր եւ շատ համեստ իրանց կարիքներում:

Հողատերերի նեւ, շատ քիչ բացառութիւններով, չէ պատահում մի որ եւ է թիւրի-  
մացութիւն կապալառուի վարձի կամ թէ առ հասարակ հողային հարցերի վերաբերմամբ .  
իսկ միջէ ի նկատի ունենանք այն հանդամանքը , որ նոքա կարողացան մաքրել եւ մշակել  
այդ տեսակ վայրերի հողերը, դարձնելով նրանց յարժար խաղողի այդիներէ համար , որոնցք  
իսկական հողատէրերը որդէն ձեռք էնին քաշել , չէ կարելի չհամահայնիլ որ Հայերը շատ  
աշխատասէր են : Եւ իսկապէս Հայի ընտանիքը , աւխտիք ըլլող իր վտար ու չափահաս անդամ-  
ներով , հրեխայք եւ կանայք , համարեա թէ ամբողջ օրը անցկացնում են աշխատանքի մէջ ,  
եւ չնորհու այդ զարմանալի աշխատութեանը եւ համարութեանը՝ նրանք պատճառ եղան որ  
այդ տեսակ վայրերի հողերը իրանց օգուտը տուին :

Տեղադրուելով փոքր համայնքներու մէջ Հայերը նախագայտի են գրաւել աւելի բարձր տեղեր  
աարերի զա-իվայրում , ջրի հորեր են փորում, եւ հէնց այդ միջոցով ի միջի այլոց ազատ են  
մնում տեղական տիրոջից :

ՆՅՕՎԹԷ ՕՐՕՋՐԷՆԻԻԵ ,  
12/25 յունուար

## ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

— 0 —  
Թ Ա Թ Ը

Միջերկրականի արեւելեան ասիայի , Լիբա-  
նանու հակայ ընտանջութայն սկսեալ , Թարա-  
պուլուս , Դամասկոս մինչեւ Լաթաքիա , կը  
հանգիպիս կարգ մը լիւնազագայններու : որ  
հազարաւոր տարիներէ ի վեր իրենց նպարտ  
ու խոժոռ ճակատը տուած հովերուն ու ամ-  
պերուն , կը տիրեն Միջերկրականին :

Կը հանդիպիս այնտեղ խիտ անտառներու ,  
որոնց մէջերը կը փայլին երբեմն արտեր ,  
այդիներ ու պարտէզներ , մարդկային խնամ-  
քով տնկուած ու մեծցած , եւ ուր թաքնուած  
կը գտնես արժիւ գիւղեր , աւաններ ու իւր-  
ճիւղեր :

Կը գտնես նոն ժողովուրդ մը որ կղզիացած  
կը մնայ թաւրք տիրապետութեան լայնպարտա-  
բած կրկրին մէջ , կղզիացած աշխարհիս լու-  
սաւորութենէն ու քաղաքակրթութենէն ,  
կորսնցուցած իր կրօնքն ու պատմութիւնը ,  
մնացած յետին ու վայրենի , պաճած է միայն  
իր սեփական ազատութիւնն ու ասպետա-  
կան ոգին զարաւոր պատերազմներով , ողբալի  
կողորածներու եւ բազմաթիւ յաղթանակնե-  
րու գնով :

Ոչ մէկ տեղ անոնց անունը չի յիշուիր , ոչ  
մէկ թիւրք անոնց վրայ չի խօսիր , եւ ոչ մէկ  
Եւրոպացի գեա այցիներ , պաճած է միայն  
Աշխարհագրութեան քարտէզներու վրայ գեա  
հերմակ կը մնայ երկրագնդիս այդ քարտէզի

կողոր. կարծես թէ ան մոռցուած ըլլալ մարդ-  
ու թենէ , ինչպէս անոր վրայ բայրող այդ ֆա-  
հապետական եւ ասպետական ժողովուրդը :

Կը գտնես անոնց յարուանկութիւնը կիլի-  
կիոյ ծովկղերքի ամբողջ երկայնութեան վրայ  
տարածուած , Լաթաքեայէն մինչեւ Ատանայ ,  
միայն սա արարելութեամբ որ այդ վերջիննե-  
րը Տանկաց նպատակութիւնը ընցուած են եւ  
կը ընակին զայստիրու եւ թրքախառն քաղաք-  
ներու մէջ :

Լաթաքիա , Անտիոք եւ Ալիքսանտրիթ քա-  
ղաքներու մէջ մեծամասնութիւն կը կազմեն  
Տանկաց վրայ . ու ին նաեւ բազում գիւղեր ,  
թրքախառն եւ առանձին :

### ԱՆՈՒՆԸ

Ատոնք չունին ընդհանուր անուր մը որով  
ժանօթ ըլլան չըպակայ ազգաց , զբացի ամեն  
ազգ մասնաւոր անուանով մը կը հօշէ զիրենք .

Հայերը «Թաթ» կ'անուանին զպանոսը .  
չգիտնալով սակայն թէ ուսկից իացում ասած  
է այդ անունը : Եպտերը պտկէ կը հետեցնեն  
թէ անոնք թաթարական արշաւանքներէ մը-  
նացորդ մը եղած ըլլան , սակայն այդ չի  
կրնար փաստիկատուելլ անոնց թաթար ճիւղի  
պատկանելուն : Տիրող տարր մը , ինչպէս էր  
Թաթարը , պէտք էր որ աւելի զաշտային եր-  
կիր մը եւ բարեբեր տեղ մը ընտրէր ընակե-  
լու . պէտք չունէին Թաթարները լիտներու եւ  
այստպսեներու մէջ բնակելու : Հոպա այդ  
երկրի Ատորենքը ի՞նչ կ'ընէ : Եթէ արտե՞զ  
Թաթար ճիւղին կը պատկանին . մարաւաղը որ  
վարք գեա ուրիշ փոքարի պիտի գտնէ այդ  
կարծիքը բոլորովին հերքելու :